ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԲԱՑՎԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հունիսի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց ատամնաբուժական կենտրոնի օրհնության կարգ և հուշաքարի բացում: Արարողությանը իրենց մասնակցությունն էին բերել ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինին, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անրի Կյունին, Էջմիածնի քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, Մայր Աթոռի միաբաններ և Մարսելից ժամանած ֆրանսահայեր:

Ատամնաբուժական դիսպանսերը Հայոց Հայրապետի օրհնությամբ կառուցվելու է Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիի հովանավորությամբ և ֆրանսահայ «Բարձունք 5165» բարեգործական կազմակերպության ջանքերով:

Արարողության ավարտին Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նահանգապետին և մարսելաբնակ բարեպաշտ հայորդիներին այս նախաձեռնության համար, որը վկայում է ֆրանսիացի և հայ ժողովուրդների բարեկամության ու եղբայրական սիրո մասին: «Այսօր մեր հոգին առանձնակի մխիթարություն է ապրում, որովհետև ձեր հովանավորությամբ և օժանդակությամբ բացվող ատամնաբուժական կենտրոնը վերականգնելու է մի հաստատություն, որը հիմնադրվել է դեռևս 1902 թ. երջանկահիշատակ Մկրտիչ Խրիմյան Ամենայն Հայոց Հայրապետի կողմից, որպես հիվանդանոց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սանուց համար», - իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

*

* *

Արարողությունից հետո Վեհարանում, ընդունելության ժամանակ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիին՝ իբրև գնահատության իր հայանպաստ գործունեության:

Ստանալով Հայ Եկեղեցու բարձրագույն շքանշանը՝ պրն Գերինին Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց իրեն արժանացրած պատվի համար: Բարձր գնահատելով Հայ Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում նահանգապետը հավաստիացրեց, որ այսուհետ ևս ամեն ինչ կանի հայ-ֆրանսիական բարեկամությունն առավել ամրապնդելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ